



ՀԻՆ ՀԱԻԱՏՔ ՀԱՅՈՑ

ԳԼ. Դ. - ԼՈՒՍԱՌԻՈՐԱՅ ՊԱՇՏՈՆ.

(Տես յէջ 241)

ՀԱՅԿ. — Վահագնը յերկինս դասող Հայք՝
էին կրքնար իրենց գերազայն Դիւցազին՝ Հայ-
կին՝ ուրիշ տեղ տալ, բայց եթէ ամենէն պայ-
ծառ աստեղատունը, որ է ըստ արեւմտեայց
կոչուածն Օրիոնը՝ Ջրնայ, առասպելեալ որդի՝
ծովու շաստուածայն Պիսիդոնի կամ՝ Ենպտունի
Եւրիալեայ, և քաջ աստեղագետ և որսորդ՝ որ
Անահայ հետ յանդերձնելով մրցել է նետա-
ձգութեան, ասոր նախանձով կարծե՛ խաժուած
մեռաւ, և դիցուհին զղջալով՝ փոխարկեց զնա
յասող մեծապայծառ։ Հայոց աւանդութիւնն
այլ իրենց Հայկին՝ գրեթէ զուգահաւասարի
յունականին. Հայկին՝ իբր յատկանիշ գրուի
քաջ Աղեղնառոր ըլլալն, և իր երեքթեւեան
նետերովն սպաննել իր արեւելեանը (Բել).
Հայկն առաջին առաքաղորդի կ'ըսուի, որ է՝
ժամանակի և տարւոյ չափ ու շրջան որոշող.
նա այս ի հարկէ աստեղագիտութեամբ կ'ըլլայ։
Այս երկու առաւելութեամբք նմանին Օ-
րիոնն և Հայկն. սա միշտ և տառի յաւել-
մամբ Հայկն կոչուի, երբ յիշուի իբրեւ ասող
և աստեղատուն. վասն զի ըստ աստեղաբաշ-
խից՝ Թէ և մի է պայծառազայն աստղն (որ
առանձին անուամբ՝ ըստ նոցա՝ Bételgeuse
կամ Adaher կոչուի, այլ ուրիշ աստղերով
մէկ համաստեղութիւն կամ պար մը կազմէ,

զոր (ինչպէս և ուրիշները) երկնադրութեան
կամ աստեղացոյցի վրայ նշանակելու համար՝
(կենդանեաց կամ) մարդու կերպարանք մի
ձեւացընեն, և անոր այլեպէլ մասանց վրայ
կու շարեն աստղերը, իւրաքանչիւրին զատ
զատ անուններ տալով. այսպէս և (Թողլով
զայլս) Օրիոնի գոտի համարին և կոչեն զատ
զատ անուամբք երեք միշար պայծառ աստ-
ղեր, զոր և Երեք Բազառորք այլ կոչեն։ Այս
ըլլայ Թեբեա Հայոց այլ իրենց նախօր
դիւցազին կոչածն, Շամփոռք Հայկին։ Շամ-
փուր՝ յայտ է ինչ նշանակէ հասարակօրէն,
(միս խորվելու երկար երկաթն, այլ և գէնքի
և սպանութեան սլաք). բայց Շամփուրակ և
Շամփուրակ՝ նշանակէ մեր հին լեզուաւ նա եւ
պսակ. ո՛րն այլ ըլլայ՝ Օրիոնի պէս Հայկին՝
վրայ յատուկ և ոչ աննման բան մ'այլ զու-
գուի։ — Դարձեալ, Օրիոնն որսորդն երկու
Շոռն այլ ունի, մեծ և փոքր, որոց վղերնուն
կապը բռնէ ձեռքով. Հայկ՝ իր սօրի Բելը և
անոր զօրքերն այլ շուն կոչեց։ Որքան այլ
առասպելք և վիպասանականք համարուին այս
բաներս, երկու դիտելիք են. Օրիոնի և Հայ-

1. Հայկին կամ Օրիոնի անուան տեղ եր-
բայեցերէն անունն է Շիմաք։

կայ նմանութիւնքն, և նոյնպէս եթէ մեր հին Հայկազանց զիւս ըլլայ և եթէ մեր երանելի և քաջ թարգմանչաց՝ զՀայկին ի պայծառագոյն աստեղատան տեղադրելն, պանծալի ազգային մոտեմութիւն մ'է. և թէ ուստ այլ ըլլար Հայկին, Սուրբ են անոնք՝ որ մեզի կարգացրնել կու տան ի Ս. Գիրս. և Աստուծոյ իր ամենակարգութիւնը ցուցնելու ձայնն առ Յովր՝ (Լճ, 31) լսեցրնելու և մեզ, « Միթէ դո՞ւ բացեր զՊատրուակ Հայկին » . և իր զօրութեան սպառնալիքն առ բռնաւորս Բաբելացոց, Եսայեայ մարգարէի բերնով. (ԺԳ, 10). « Ահաւասիկ օր Տեառն հասեալ » է անհնարին լի բարկութեամբ, ռեսակալութեամբ սրամոռութեամբ, անեղի զտեղեղերս » անապատ... զի աստեղք երկնից՝ Հայկիսն հանգրծ և ամենայն զարդուն երկնից՝ լոյս » մի՛ տացն » : — Աւաղ, որ լատին թարգմանութեան մէջ չի յիշուի այս գասապետն աստեղաց, այլ միայն պայծառագոյն աստեղք կ'ըսուի. (Stellæ coeli et splendor earum).

Իսկ Յովրայ յիշած Հայկայ Պատրուակին՝ տեղ՝ կ'ըսուի, « Կերնան (Հայկին) Արկտուրոսի շրջանը շփոթել կամ դադրեցնել. (Gyrum Arcturi poteris dissipare?) : Մինչ հոս Հայկին՝ այսինքն Օրիօնի անունն լուծած է ի լատինն, ուրիշ տեղ (Թ. 9) նոյնն յիշէ միտանող զԱրկտուր և զՕրիօն. (Qui facit Arcturum et Oriona et Hyades et Interiora austru). որոյ հակառակ՝ այս տեղ մեր թարգմանութեան և յոյն բնաբերն մէջ չկայ Հայկին անունն, այլ զրուի, « Որ ա » բար ցճազմաստեղան և զԳիշերալուսին, և « զՍայլն, և զՇամնարանս Հարառոյ » : — Այս ետքի անունն այլ զիտելի է իբրեւ հայկական անուն համաստեղութեան միոյ, զոր լատինն իմացրնել տայ իբրեւ ի խորս հարուակողման երկնից ծածկուած աստղեր. ուրոց փոխան՝ եթէ հայերէնն ազգային առասպել մի լակնարկէ այլ՝ միշտ վսեմական է կոչելն Շտեմարանք Հարառոյ. և արդարեւ հարաւային համաստեղութիւնք՝ թէ և պայծառք՝ այլ սակաւածանօթ և անտեսանելիք են բազմութեան մարդկան քան զհիստիայինս :

Բայց մեզի աւելի հետաքննական էր զիսնալն՝ թէ ինչ էր Պատրուակ Հայկին՝ Յ. ըստ հին աւանդութեան Հայոց, որ նոր դէպք կամ յիշատակ մ'այլ կ'աւելցրնէր, այնոր ստող կամ վիպասանական պատմութեան. որոյ միացորդն ըստ աստեղագաշտական տեսութեան՝ լրացնելու համար (մեր զիտութեան չափով) աւելցրնեմք, որ ըստ ոմանց Հայկ կոչի և Կշիս Կենդանակերպ համաստեղութիւնն (աւրեգական 12 տանց մին), որոյ թաթերն են երկու հատ երրորդ կարգի մեծութեամբ պայծառ աստղեր. ոմանք նոյն համարին զԿշիս և զՇամփուրս Հայկին, ինչպէս կ'ըսէ Երեմիա Մեդրացի բառակիրն. « Հայկին՝ Կշիսն է, » զոր ոմանք Շամփուրս ասեն » . և ինչուան հիմայ շինականք այն կողմի աստղերը կոչեն Շիշ և Շամփուր, քար եւ Կշիս : — Ոմանք զՀրատ մարտակն եւս համարին Հայկ կոչուած. այս շիկակարմիր մարտակն և իր անձնաւորն՝ չափուած պատերազմի (Mars ըստ Լատ. "Ares Արէս" ըստ Յունաց), չէր անպաշտօն մեր պատերազմի և քաջութեան նախօրինակ խաշտակն և քաջագանգաշ կոչուած Հայկին կերպարանաց և արութեան. մանաւանդ եթէ ներուէր Օրիօնը—Հայկին վերոյիշեալ զիսաւոր

3. Աւետիք Տիգրանակերտցի հարցրնէ և պատասխանէ. « Զինչ է Պատրուակն. — Պատասխանի. — Երեք է, մինն այն է՝ որ ի գունտն առ տեղաց վեց կերպիւ մի քան զմի մեծ աստեղք կան, որ կոչին առաջին մեծութիւն, ք, գ, դ, ե, զ. արդ առաջին մեծութիւնն քննէր առ տեղք որ կան ի հաստատութեանն՝ նըքս կոչին Պատրուակը. Երկրորդ, Լուսաբեր մոլոռ. Իսկի՝ այսինքն Զօհրէի անունն է. Երրորդ է ինչ առաջ՝ որ ի գոլորեաց ծնանի, և ի ժամանակն ժամանակս երեւի ի յօդք իբրեւ զԼուսն » : « Ինչ առաջին ծածկէ զամենայն աստեղս » : Արդ ի մէջ քորց յորժամ տեսանես Պատրուակ. ըստ տեղոյն և շարադրութեանն իմաստանակ թէ որ պատրուակիցն է, և Յոր ի գիրս իւր յիշեալ է : Այլ և յատուկ Պատրուակ Հայկն է, որ է Շամփուրն, իւր մեծամեծ աստեղքն մերձակայիքն » :

1. Յունարէնն է Փռօքս, որ աւելի ցանկով փակուած նշանակէ :

2. Յոյնն է Ταμιας νότου Եփրքնակողմն հարառոյ :

աստեղ (Adaher) անունը Ասորահեր կարգալ, այսինքն Հրապիսակ, հուր-հեր ըստ Վահագնի։ Այս իմաստով (իբրև. Հրատ-Արէս) Աղթարը կ'ըսեն, թէ Դնեալն ընդ աստեղատամբ Հայկին՝ յերկաթոյ մեռանի։

Երեքցիք վերը Օրիոնի (Հայկին) Շուներն որոյ Ատահեր մեծ աստղին հետ հառնիկին որք ձեւացընեն դէպ ի հրկախ՝ առ ու ձախ կողմէն. մեծն՝ որ յաստղաբաշխից Սիրիոս (Sirius) կոչուի՝ ըստ մեզ է յատուկ Շնիկ աստղն և ամենապայծառն յաստեղս, Սորիս կոչուած յԵփրատացոց, յորմէ և Սոթիական շրջանն, որ է մեզ կոչի Շրջան Հայկին, ուրոյ ինչ բլլալը բացատրուած է այլեայլ անգամ մեր օրերուս. այս տեղ բաւական բլլայ անդրադարձնել զմիտս՝ զարձեալ Հայկայ հընութեան և աստեղագիտութեան վրայ, հասարակ կամ բազմատուած ընդ Եփրատացոց, որք այս Սոթիական կամ Շնկան 1461—1460՝ նահանջ և աննահանջ տարիներու շրջանով՝ կ'օրհնական և քաղաքական տարիներու սկիզբն միացընէին. արդ, կամ Շնիկն այլ Հայկն համաստեղութեան մասն և նոյն համարելով, կամ հին ատեն ասոյց այս շրջանի ծանօթութեամբ է Հայս՝ կոչեցաւ յանուն սորա Շրջան Հայկին, որով և իր դիւցազնական պատիւն այլ նոր հաստատութիւն մի կ'առնու։ Փոքր Շան մեծաղոյն աստղն որ Պրօկիոն կոչուի, յայտնի չէ թէ յատուկ անուն մ'ունէր հայերէն։ Իր լոյսն հազիւ Մեծին երրորդ մասից հաւասարի։ Շնիկն՝ պայծառութեանն համար Արամազդայ աստղ այլ կոչուած է։

Հայ անուամբ ծանօթ համաստեղութեանց մէկն այլ է Եգոդն, որ թէ և թարգմանութիւն երեւի տար լեզուի, ինչպէս և փաւն կերէն Bouvier, այլ կոչուի կամ զրուած է և Զովաղ կամ Զովոդ՝ այսոր զխաւոր աստղն է նախալիշեալ Արկտուրն, Arcturus, ամենամեծ և ամենապայծառ աստեղաց մին, որ և Գունագոյն ցոլմունք ունի, և փոփոխութիւններն աւելի յայտնի կ'երեւին քան այլոց. հաւանելի է թէ այս այլ յատուկ հայ անուն ունեցած բլլայ, զուգէ և Գոռքանի աստղն բլլայ՝ որ ընդ Սայլի յիշուեցաւ։

12 Կենդանակերպ համաստեղութեանց՝ որ

և Աստեղատուեց արեգական կոչուին, — Իբրու զի իւրաքանչիւրին սահմանին միջէն աւիս մի գնայ կամ կենայ արեգական և բոլորէ զտարին, — յատուկ անուն ոչ մեր լեզուի մէջ կայ և ոչ ուրիշներու. ամենքն այլ հին եգիպտական ծանօթ անունները՝ թարգմաններ են. ինչպէս, Խոյ, Յուլ, Եկուորեակ, և այլն. միայն Աւելեաց հինգ օրերու տանուտէրն Արտախոյր կոչուի առ մեզ։ Բայց՝ իբրեւ թեթեւ հաւանութեամբ կարծեմ թէ այսպէս ինչ նշանակեն Տանուտեղ տարւոյ ըսուած և վեց միայն նշանակուած հին տոմարի մի մէջ. և են, Վիշապ, որոյ անուամբ համաստեղութիւն այլ կայ (Dragon). Կռզ Վիշապ. Խոռակն կամ Խիփակ, Խոչովակն, Կապարիկն, Բագմ. ռուսիկն. Երախն՝ կրրնար Խեցզեանի զուգուիլ, եթէ բաւական հաւանելի բլլար միւսոց այլ 12 Կենդանակերպից թիւէն բլլայն։ — Ըստ անուանց Կենդանակերպիցն՝ անտարմուք պէտքէս յատուկիւն յարմարեցրեր են անոնց. յորոց է և Անան. Շիրակացոյ (կամ ուրիշի մի) յիշածն. « Խոյն՝ ունի զիշխանականն, » զԵգիպտականն, զգանգրական հերոսն. — » Յուլն՝ ունի զուժեղնականն. — Երկառն. » րեակն՝ զմիջասահմանականն. — Խեցզե. » տիկն՝ կողմանաւոր է և գէշ. — Աբիսմն՝ » բըժող է և հողային, մեծակն է, խալաքա. » րական և ցուռ. — Կոյսն՝ զարգասիրա. » կան է, գէշ և զեգեցիկ. — Կշիտն՝ հա. » աստարական և զարդարական. — Կա. » րիմն՝ ծնելական և խոտոական. — Ա. » ղեղնառն՝ պատերազմողական է և զօ. » բաւոր. — Այծեղիշիւրն՝ զանգիտական է » և անբանական. — Զրիսն՝ զիշական է » և խառնական. — Զռնկն՝ բարեխառնա. » կան է, և ընդդէմ հարկանէ »։ — Այս Կենդանակերպից տակ սահմանած էին երկրիս աշխարհագրական մասերն և ազգերը. ըստ այսմ, « Խոյն, Յուլն և Եկուորեին (պատ. » շանին) Պարսք և Բաբելոնի, որ կոչին » Տուն տերունական. — Խեցզեական, Ա. » ռիւս, Կոյս, Հայք և Գորդիակք (կործայք)

1. Անան. Շիրակ կ'ըսէ. « Զնոյն անուանս յետ Քաղդէացոց՝ կոչեն Յոյնք, Հայք, Պարսք », և այս բերք լեզուք անուններն այլ գրէ։

» և Յոյնք, որ կոչին Գիշերականք և Կող-
 » մանացիք. — Կշիռն, Կարինն, Աղեղ-
 » նաւորն, Ալթեղլիւր, Ջրհոս, Չուկն, տուն՝
 » որ մէջ է ընդ ամենայն երկիր » : Դարձեալ
 ասոնց իւրաքանչիւրն մանրամասնաբար ստու-
 թագրուած է իր ներքեւի աշխարհքներով և
 ազգերով. յորոց « խեցգետինն ձօնեալ է նա-
 » հանդին Հայոց » : Աղթարական զրոց մէջ
 շատ ու շատ յարմար անյարմար բաներ գրուած
 են Կենդանակերպից ազդեցութեանց վրայօր:
 Ասոնցմէ զատ յիշուած կամ մեր հանդի-
 պած հայկական անուանքն աստեղաց են հե-
 տեւեալքն, որոց ո՛ր համաստեղութեանց պատ-
 շանիլը՝ չեմք գիտել, միայն ի նորոց լսուած
 լռեաց աւտոյն՝ որ Կենդանակամարի Կշիռ
 նշանին ներքեւն է՝ համարիմք նոյն Էզդդի
 վերդդրեալ Արկտուրոս պայծառ աստղն. իսկ
 Կշիռն այլ հին սումարի մի մէջ Խափանք
 գրուած է : Վանանդացին (Ղուկաս) Սեւադիմ
 աստղ կոչէ զԿալիոպէ համաստեղութիւնը .
 այս անուամբ կոչուի հիմայ նորայայտ փոքր
 մոլորակ մի եւս :

Տօմարական և աստեղագիտական գիրք մի
 վերդդրեալ ծանօթից հետ խառն զրէ և այս
 անծանօթները, զամենն այլ միանդամայն
 Խառնարան Աստեղք կոչելով. և են,
 Շնաստղն կամ փոքր Շնիկն.
 Խառնական, կամ Խառնական կամ Հոլովակ.
 Վաքն կամ Վանքն.
 Երիծասն.
 Մեծ Արջ կամ Սայլն.
 Փոքր Արջ կամ Միւս Սայլ.
 Վիշապ.
 Թուշման Զին (Պեգաս ?).
 Զրոճ.
 Բազմոտանի.
 Բեւեւքն երկնից.
 Խիփակն.
 Մարգոն.
 Կարճրնչեաց (Կովագեղաց ?).
 Ճոկանոտ կամ Կոճնատոն (Կոճանոտն ?).
 Զրաքաշն (միթէ Զրհոս տանուտէրն).
 Խոզ (նոր զրոզ յիշէ և Վարազ՝ զուգելով
 Հրատի). [աստղք].
 Անդիակն (յիշեցընէ Հայկին գօտւոյն Անիտակ
 Արկոյն).

Ասոնցմէ զատ յիշուած է նաև Հանկն (թէ
 չիցէ Հայկն) որոյ նշանաձեւն է Սողոմոն-
 նեան կնիքն :

Աւետիք Ամբեցին յիշէ զՀայկն իբրեւ պար-
 մի աստեղաց, նոյնպէս և զՀոլիան. Ար-
 ժիան. Գիշերքն. Փնարն. Սողոմոնի արքան.
 Յորենքաղ մշակն. Մեծ Շունն. Պատերազ-
 միկ աստղն. Գայլն : Խառնարան աստեղաց
 յիշողն՝ կ'աւելցընէ և զայս. « Այս աստեղք
 » են որ ցուցանեն զանձրեաց սաստկութիւն.
 » և որ ի ծովուն գնան սոքիմք՝ մանաւանդ
 » Սայլն՝ յայտնի ցուցանէ զնաւազնացաց
 » հետ. զի հիւսիսական աստեղքդ ոչ են
 » գնացականք այլ կացականք, և շարժեալ
 » ի վերին եօթն գօտեանցն՝ որպէս ի ծովու
 » ալէկոժին : Այս են նշանացոյց աստեղք.
 » տիմարք եպերեն, որ ոչ գիտեն զգիրս.
 » այսմ վասն պէ, եթէ՛ Էդ գնոսա Աստուած
 » ի նշան և ի ժամանակս » :

Աստեղ բառիւ մէկ երկու բարդեալ ա-
 նուանք այլ կան, որ չեն նշանակեր յատուկ
 աստղ մի. ինչպէս Էրաստի և Անկաստի, որ
 Շնկան բարձրանայն և ցածնալը, կամ ե-
 րեւալն և աներեւութանալը նշանակեն. ա-
 սոնք յիշուին և ի նորագոյն սօմարս, ուրիշ
 քանի մի անուանց հետ՝ որք աւելի կրօնա-
 կան կամ աղթարական իմաստ ունին. ինչ-
 պէս Ըմբեանալն, ի 23 Նոյեմբ. կամ 15
 Հայոց Տրէ ամսոյ. « Որ զինչ այսօր լինի
 (գրեն սօմարք), ձմեռն այնպէս անցանէ, թէ
 » ջեր է և թէ ցուրտ է, թէ պարզ և թէ
 » ամպ » : Ի հնագոյն սօմարս գրուի Բաա-
 մաղ կամ Բառնմաղ, և կ'ըսուի սօն մի՝ « զոր
 » պատուեն ֆաղդեացիքն. այլ կատարելն
 » հինգ ամբ են ». այսինքն հինգ տարին
 անգամ մի, որպէս դոմպիսիդք Յունաց : Ո-
 մանք այլ այս բառս մեկնեն ըստ մեր լե-
 ղուի, Աղով բռնել զոյնարս՝ ի սկզբան ձմե-
 րան և ժողվել ի փարախս, Ս. Յակովբայ
 սօնի օրերովն. կերպով մի համաձայնի այս
 մերոց Նախըրթող կոչածին : Բանասիրաց թու-
 ղումք ստուգել, թէ արդեօք Բառնմաղն չէ՞
 Գանգիսի հարաւակողմի Հնդկաց Վիշնու չաա-
 տուածն՝ զոր այն անուամբ կոչեն, Perou-
 mal գրուած փռանկերէն : — Գրուած է ի
 մերայոց նա և Բանպար :

Գայրավագ անուն մ'այլ նշանակութի ի տօմարս, մարտ ամսոյ 9 կամ 10էն. « Եւ զսա » պատուեն Քաղղէացիք (կ'ըստի). « որպիսի » օրս այս՝ լինի զ'60 օր » : Բայց թուի թէ զարնանային հասարակածի յիշատակ պիտի ըլլայ, յորում աւուր Արեգակն ի խոյ ասանդառուն մտանէ. — արեւօք խոյազող Գայլն այլ՝ անասնելական վազք մի ունի՞ այս անդ, որովհետեւ բառն (որ ե Գայլագ զրուած կայ) հայերէն որոշ կ'իմացուի. (եթէ ք տառու գրուած ըլլար՝ Արեգական երազելն ե օրերու երկայնիւն այլ կըրնար կարծիք մի արթնցընել ի միտս) :

Չատ ի հաստատուն աստեղաց (ըստ աչաց երեւելոյ) հասարակաց ծանօթ են և անհաստաւք կամ՝ յանկարծեբեւեաց լուսաւորք, որք ինչուան հիմայ շատ տեղ ռամկաց անարկու կամ՝ շարագուշակ թուին. եւս առաւել առ հեթանոսս էին, անտարակոյս և առ մեւրայինս. որոց ինչ կարծիք և հաւատք ունեւալն յայտնի չէ. բայց որովհետեւ անոնց աւելի քննող աչքէն չէին վրիպեր, ի հարկէ անասնելական կամ կրօնական կարծիք, այլ ունեցնի են : Այս տեսակ Հուսաւորաց երեք անուանք յիշուին սովորաբար, և մեկնին այսպէս ի լուծմունս գրոց Ս. Բարդղի. « Վարս » սաւառքն (կամ Գիսաւառք որ և Նիգալաւառք » կամ Նիգալաւաձե և Ագեւոր), և Հեծաւ » նալք 2, և Գոռպարք. Սրբա ոչ են աստեղք, այլ ի յօգդ երեւի՞ ի հարմանէ » օղոյդ յերեսարս : Վարսաւառք այն է որ եւ

» բեւի երբեմն յօղդ աստեղաձեւ, և ագի
» ունայ : Եւ Հեծաւալք, որ ոչ բոլոր և ոչ
» ունելով ագի իրբեւ զվարսաւորն, այլ երւ
» կայն ցրումն լինի իրբեւ զհեծանս : Գոռ
» պարքն՝ որ մեծ բոլոր երեւի (Falot ?),
» ոչ վարսաւոր և ոչ հեծանաձեւ : Ըստ զաւ
» նագան ձեւոցն և յորոշըմունքն՝ այս է աւ
» նուանքն՝ նման ձեւոցն եղաւ. բայց լինեւ
» լուծիւն նոցա ի մի և ի նոյն պատճառ
» ու, զոր Ուիւլար սաէ, անդ լինի. Ուիւ
» լար՝ զօգդ սաէ, որ շուրջ զերկրաւ է, յոր
» ժամ յերկրէ բարձրանայ մերձ յարփին.
» զի որպէս նիւթ հրոյ՝ երկաթ և քար՝
» բարեւալ՝ կայծակունս արձակէ, այսպէս
» թանձր և պղտոր օդ՝ ի վեր ծառագեալ
» բռնութեամբ հողմոյ՝ ի ներքս անկանի, և
» հարմամբն յիբեարս՝ որպէս աստեղ երեւ
» տումս տայ : Զայսպիսիս՝ վարսաւոր և Հեւ
» ծանակ և Գուպար սանն » : Թողումք
մեկնիս զիստութեան չափը, որ աւելի օգեւ
» լեւոյթ քան լուսեբեւոյթ նշանակէ 3. և չի
» յիշեր զԱստուպ կամ Թուիւ աստղը (Etoile
» filante), որոյ պէսպէս կարծիք տան ռամիկք,
» և առած են անոնց և մեր հեթանոս հարք :
» Հին գրիչ մի, ցուցէ Անանիա Շիրակ. աւ
» նուանէ զայս՝ « Աստղ որ ձգի յօգս, ի չփեւ
» լոյ հողմոց լինի » . ուսկից կրակ ելնել ցու
» ցրնէ՝ իբր երկարութեամբ, և հոյն պիմաւ
» նալուն համեմատ՝ երկար կամ ասփաւայն
» կ'ըլլայ ձգուած աստղն :

(Շարայարելի)

1. Քրիստոսի խաչելութենէն հազար տարի վերջ (ըստ Հայոց 228—1040—1) արեգական խաւարումն իբրեւ աշխարհիս աւերած՝ յիշեն պատմիչք մեր և օտարք. նոյն թուին Զանաոր՝ զիսաւոր մ'այլ երեւցած կ'ըսէ Մատթ. Ուռհայեցի տարէգիր, որ « երեւեալ յարեւմուտս կոչս յերեւ » կորէն և յետս սողալով զնայր, և եհար զխաչ » մաստղն և զԼուսինն, և ինքն աներեւոյթ եղեւ » և յարեւմուտս դարձաւ : Աւելի գիտնօրէն գրէ զայս Սմբատ Գունդտասալ. « Սողալով եկն ի հարաւ, ընդ Բագրատին և ընդ Լուսնին ի մէջն » :

2. Այսու անուամբ ոչ միայն պատահական լուսոյ երեւոյթներ, այլ Հիմայ Հիսպիսայգ կոչուածն այլ (Aurore boréale) իմանալու է. առանց որոշ

շելու շատ հեղ զանոնք վերոյիշեալ տարէգիրն՝ (Ուռհայեցի) մեծ վախով և մանրամասն օտարաբէր : Ինչպէս ի Հայոց թուականս եւք ի կողմն Նիսիսոյ. ԵՌԸ. ԵԻԹ. ԵԵԹ. ԵԼԹ. և այլն :

3. Գրեթէ նոյնպէս գրէ և Գր. Աստուածաբանի բարեք մեկնողն, որ թէ և Հեծանակի տեղ Հեծանոց գրէ և Յարգողն է կ'ըսէ, և Գուպարքն այլ Բաղմաստղն, ինչպէս մենք այլ Ըսինք, բայց օգեղէն բան մի կարծէ. երկուքին այլ « Նոյն է լինելութեան պատճառ, յորժամ մարիկ և խառնակումն օղոց լինի թանձր և զարդատրեալ տանի հարկանէ ընդ արփին. նա յայտնապէս որպէս զանտեղ երեւոյթ նորհէ, և կերպարանէ ի տեսակ աստեղն » :

